Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
**Share** — copy and redistribute the material in any medium or format
**Adapt** — remix, transform, and build upon the material

ՀԱՄ. Կ. (Բ) Կ. Կ. Կ. ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ. ՊՐՈՊԱԳԱՆԴԻ
ԲԱԺԻՆ

ԾՐԱԳՐԵՐ

Կուսպրոպցանցերի չոր կուսուսուցման
ռուսյան ցանցի միջին օղակների
համար 1931/32 ուս. թ.

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹԵՈՐԻԱՆ

338(47)
Խ-84

ՊԵՏՀՐԱՏ 1931 ԵՐԵՎԱՆ

17 FEB 2010

ՀԱՄ. Կ. (Բ) Կ. Կ. Կ. ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՅԵՎ ՊՐՈՊԱԳԱՆԴԻ
ԲԱԺԻՆ

338(47)
Խ-84

ԾՐԱԳՐԵՐ

Կուսդպրոցների յեվ կուսլուսավորության ցանցի միջին օղակների համար 1931/32 ուս. տ.

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹԵՈՐԻԱՆ

Թարգմ. ռուսերենից Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Խմբ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ

Гос. Публ. Библиотека
ՀԽՍՀ – ССРА

ՊԵՏՀՐԱՏ 1931 ՅԵՐԵՎԱՆ

13.05.2013

29099

Պետհրատի տպարան
Գլավլիտ № 6989 (բ)
Պատվեր № 6135
Հրատ. 1928
Տիրաժ 1000

ՀԱՍ
48922-65

# ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Կուսդպրոցներում խորհրդային տնտեսության ուսուցումն անցնելու նպատակն է ծանոթացնել ամենից առաջ կարևորագույն կուսակցական այն փաստաթղթերի հետ, վորոնք մեկնաբանում են տնտեսական քաղաքականության հիմնական խնդիրները, խորհրդային եկոնոմիկայի զարգացման ուղիներն ու հանրագումարները (կուսագումարների վորոշումները, Լենինի և Ստալինի հոդվածները և ճառերը):

Անհրաժեշտ է հաջողեցնել հիմնովին յուրացնել տալու Լենինի հեղինակություններից և Ստալինի «Լենինիզմի հարցերը» հեղինակության նշանավոր մասից մի շարք կարևորագույն տեղերը: Անհրաժեշտ է 16-րդ համագումարի քաղհաշվետվության և այդ համագումարի բանաձևերի հիմնական մշակումը:

Կուսակցական այս փաստաթղթերը, նույնպես և ուրիշ նյութեր (դասագրքեր, «բոլշևիկի» հոդվածները, «Կուսուսման ոգնություն» («В помощь партучебе») տնտեսական քաղաքականության ամսագրի սերիան և այլն) ունկնդիրներին յուրացնել տալու հիման վրա, ղեկավարը պետք է ունկնդիրներին մոտեցնի յուրացնելու խորհրդային եկոնոմիկայի որինաչափությունները ամենահանրամատչելի, հասարակ ձևով: Ղեկավարը, դրա հետ միասին, պետք է զգուշանա սխեմատիզմից և ֆորմալիզմից՝ անշեղորեն պարզաբանելով, վոր այս որինաչափությունները հանդիսանում են դասակարգային պայքարի որինաչափություններ, անշեղորեն ընդգծելով, դրա հետ միասին, կուսակցության ակտիվ և ղեկավար դերն այդ որինաչափությունների իրագործելիս: Սկսելով խորհրդային եկոնոմիկայի ա-

վելի ընդհանուր օրինաչափություններից, ընդհանուր բնութագրից, ղեկավարը պետք է ունկնդիրներին մոտեցնի ավելի կոնկրետ օրինաչափություններին (ինդուստրացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման, աշխատանքի, առևտրի, փողի, վարկի, ֆինանսների գծով և այլն):

Վոչ մի ձևով թույլատրելի չէ խորհրդային տնտեսության տեսության դասավանդման վորևէ անջատումը տնտեսական քաղաքականությունից ու մեր պլանավորման բովանդակությունից:

Տվյալ ծրագրի անցնելը հանդիսանում է միաժամանակ և ԽՍՀՄ տնտեսական քաղաքականության հիմունքների անցնելը: Կուրսերում «Խորհրդային տնտեսության տեսություն» և «Տնտեսական քաղաքականություն» առարկաների անցման տարբերությունը պետք է հանգի այն բանին, վոր առաջին դեպքում ապահոված լինի տնտեսական քաղաքականության ավելի խորացրած, տեսական անալիզը:

Այդ բանը հաջողվում է ուժեղ չեշտ դնելով ԽՍՀՄ տնտեսական օրինաչափությունները դրսևորելու վրա: Հասկանալի յէ, տնտեսական քաղաքականության պրոբլեմները չպետք է սփռել: Անհրաժեշտ է խորհրդային եկոնոմիկայի օրինաչափություններն առավելագույն չափով կոնկրետացնել՝ բերելով բավականաչափ կոնկրետ նյութ և հետևողականորեն կատարել նրանց ուսումնասիրությունը տնտեսական քաղաքականության և կուսակցության ղեկավար դերի տեսանկյունով:

Անհրաժեշտ է ղեկավարի հատուկ ուշադրությունը՝ մինչև վերջը լրիվ պահպանելու լենինյան կուսակցականությունը՝ խորհրդային տնտեսության տեսությունն անցնելիս, անշեղորեն իրագործել անհաշտ պայքար ամեն տեսակի հակալենինյան դրույթների դեմ: Հակալենինյան դրույթների քննադատությունը պետք է կատարվի հետևողականորեն յուրաքանչյուր թեմայի սահմանում յեղած բոլոր հիմնական հարցերն անցնելիս (ծրագրի մեջ, կրկնությունից խուսափելու համար,



այս քննադատությունը կենտրոնացրած է յուրաքանչյուր թեմայի վերջում):

Խորհրդային տնտեսության տեսության մշակումը պետք է վերին աստիճանի ակտուալ բնույթ ստանա, զինելով ունկնդիրներին պայքարելու կուսակցության գըլխավոր գծի համար, արտադրական պլանները կատարելու համար:

Պլանավորման հարցերը (խոսքը վոչ միայն կոնտրոլ թվերի մասին է, այլև տվյալ ձեռնարկության պլանի մասին), կազմակերպչական հարցերը, տնտեսական հաշվարկի և տեխնիկային տիրապետելու հարցերը պետք է գրավեն ամենաեյական տեղը տվյալ ծրագիրն անցնելիս:

Վորպես ամփոփում՝ պետք է ընդգծել, վոր ղեկավարը պետք է ինքը լրացնի բավական չափով մի շարք թեմաների վերաբերյալ գրականության պակասը:

---

# Ծ Ր Ա Գ Ի Ր

## 1-ԻՆ ԹԵՄԱ

## ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆ ԱՆՑՄԱՆ ՇՐՋԱՆԻ, ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՅԵՎ ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ՄԱՍԻՆ

1. Կապիտալիզմի հեղափոխական կործանման անխուսափելիությունը և կոմունիզմի փոխարինումը նրան: Կապիտալիզմից կոմունիզմի փոխանցվող շրջանի հեղափոխական բնույթը: Հոկտեմբերյան հեղափոխությունը վորպես սկիզբ համաշխարհային պրոլետարական հեղափոխության:

2. Կոմունիզմը և նրա փազերը: Սոցիալիզմը վորպես կոմունիզմի առաջին փազը:

3. Մարքսը, Ենգելսը, Լենինը, Ստալինը կապիտալիզմից սոցիալիզմի անցման շրջանի մասին: Պրոլետարական հեղափոխության տարբերությունը բուրժուականից: Դասակարգային պայքարը և պետությունը պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում: «Հրամա-

նատարական բարձունքներին» տիրանալը։ Մանր-ապրանքային տնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Կապիտալիզմի դուրսմղումն, ապա և նրա մնացորդների լուծարքը։

4. Անցման շրջանի սոցիալ-ֆաշիստական տեսությունների քննադատությունը։ («Կազմակերպված կապիտալիզմ», «տնտեսական դեմոկրատիա», սոցիալիզմի մեջ «խաղաղ ներաճելու» տեսությունը)։

5. Կապիտալիզմից սոցիալիզմի անցման շրջանի առանձնահատկությունները տարբեր տիպի յերկրներում։ Արդյունաբերական, միջին մակարդակի կապիտալիզմի, գաղութային յերկրներ և այլն)։

## 2-ՐԴ ԹԵՄԱ

## ԽՍՀՄ ՄԵՋ ՍՈՑԻԱԼԻԶՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Կապիտալիզմի զարգացման անհամաչափությունը և ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունը։ Սոցիալիստական հեղափոխության նախադրյալները ԽՍՀՄ-ում։

2. Լենինի ուսմունքը ԽՍՀՄ դասակարգերի մասին և տնտեսական հինգ տնտեսաձևերի մասին։ Քաղաքի և գյուղի զոդման պրոբլեմը ԽՍՀՄ մեջ տարբեր ետապներում։ Լենինյան կոոպերատիվ պլանը և նրա խեղաթյուրումը տրոցկիստների, աջ և «ձախ» ոպորտունիստների կողմից։

3. Նոր տնտեսական քաղաքականությունը վորպես ԽՍՀՄ-ի մեջ սոցիալիզմ կառուցելու քաղաքականություն։

4. Նեպի բուրժուական-ռեստավրատորական, վնասարարական տեսությունների քննադատությունը։

5. Նեպի աջ-ոպորտունիստական տեսության քննադատությունը։ Այս տեսության աղերսությունը Նեպի բուրժուական-ռեստավրատորական և անցման շրջանի



սոցիալ-դեմոկրատական տեսությունների հետ։ Նեպի աջ-ոպորտունիստական տեսության անհամատեղելիությունը ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ կառուցելու լենինյան տեսության հետ։

6. Նեպի տրոցկիստական տեսության քննադատությունը։ Տրոցկիզմի մենշևիկյան էությունը՝ արտահայտված այդ տեսության մեջ։ Տրոցկիզմը տնտեսաձևերի, դասակարգերի և նրանց փոխհարաբերությունների և ԽՍՀՄ մեջ սոցիալիզմ կառուցելու հնարավորության մասին։

## 3-ՐԴ ԹԵՄԱ

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՏԱՊՆԵՐԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

1. Հեղափոխության մինչնեպյան շրջանը՝ 1917 թվից մինչև նեպը։ Հոկտեմբերից մինչև ռազմական կոմունիզմը։ Ռազմական կոմունիզմ։ Ռազմական կոմունիզմից անցումը նեպին։ X համագումարի վորոշումները։

2. Նահանջի մոմենտը նեպում։

3. Սոցիալիստական հարձակումը նեպի վերականգնման պայմաններում։

4. Նեպի վերակառուցողական շրջանը։ Առևտուր և արտադրական կապը։ Տնտեսաձևերի փոխհարաբերությունները վերականգնման և վերակառուցման շրջաններում։ Դասակարգային պայքարը վերակառուցման շրջանում։ XIV, XV և XVI համագումարների վորոշումներն ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման մասին։ Խորհ. և կոլտնտեսություններ։ Համատարած կոլեկտիվացում և կուլակության՝ վորպես դասակարգի վերացումը։

5. Բուրժուական-ռեստավրատորական, աջ ոպորտունիստական և տրոցկիստական դրույթները սոցիալիստական շինարարության տարբեր ետապներում։

## 4-ՐԴ ԹԵՄԱ

## ՄՈՒՏՔ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇՐՋԱՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄԸ

1. *Սոցիալիստական հարձակումն ամբողջ ֆրոնտով և նեպի վերջին էտապն՝ ինչպես սոցիալիզմի «սկզբնական» շրջան:*

2. *Սոցիալիստական ինդուստրացման, առանձնապես ծանր ինդուստրացման ծավալման բոլշևիկյան տեմպերը:*

*Աշխատանքի սոցիալիստական ձևերը՝ սոցմրցում, հարվածայնություն: Անընդհատը, պրոլետարական ինքնաքննադատություն, պայքար բյուրոկրատիզմի դեմ: Նրանց դերը մեծ բեկման գործում, սոցիալիզմի շրջանը մտնելու գործում: Բանվոր դասակարգի նյութական բարեկեցության աճումն ու գործազրկության վերացումը ԽՍՀՄ մեջ:*

3. *Արտադրական կապի աճումն ու ամրացումը, զոդման նոր ձևերը: Միջակի վերջնական շրջադարձը դեպի սոցիալիզմ և համատարած կոլեկտիվացում: Կուլակության՝ վորպես դասակարգի վերացումը համատարած կոլեկտիվացման հիման վրա: Գյուղատնտեսության զարգացման վերաճող տեմպերը: Խոշոր սոցիալիստական գյուղատնտեսության առավելությունները մանր մենատնտեսության համեմատությամբ:*

*Խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների և մեքենատրակտորային կայանների զարգացման հիմնական հանրագումարները:*

4. *Թեթև արդյունաբերության զարգացման տեմպերի արագացումը, նրա պատճառները: Սպառման, աճման պրոբլեմը:*

5. *Նոր տնտեսական սեկտորների և դասակարգային ուժերի փոխհարաբերությունների մեջ: Նոր քաղաքի և գյուղի փոխհարաբերությունների մեջ: «Ով ո՞ւմը» պրոբլեմը արդյունաբերության, գյուղատնտեսության, ամբողջ ժողտնտեսության մեջ: Կոլտնտեսականն իբրև գլխավոր հենարան գյուղում:*



6. *Սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցման ավարտման խնդիրը 1931 թվին, վորն արտադրական ուժերի զարգացման համար բաց է անում հսկայական հնարավորություններ: Տեխնիկայի յուրացման նշանակությունը «Հասնել ու անցնել» լոզունգի իրագործման և սոցիալիստական հասարակության կառուցումն ավարտելու գործում:*

7. *Աջ օպորտունիստական, տրոցկիստական, «ձախ» օպորտունիստական աջ-«ձախ» գրուպների քննադատությունը նեպի վերջին էտապում:*

## 5-ՐԴ ԹԵՄԱ

## ԼԵՆԻՆՅԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԵԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. *Խորհրդային էկոնոմիկայի լենինյան բնութագրումը «Էկոնոմիկան և քաղաքականությունը պրոլետարիատի դիկտատուրայի շրջանում» հոդվածում: Խորհրդային էկոնոմիկայի ստալինյան բնութագիրը՝ տըրված 16-րդ կուսհամագումարում:*

2. *Ինդուստրացման հիման վրա արտադրության սոցիալիստական հանրայնացումը և կապիտալիզմի մնացորդների արմատահանումը:*

3. *Լենինյան դրույթը՝ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում տնտեսական քաղաքականության դերի մասին: Պլանի ղեկավարող դերը՝ վորպես պրոլետարական դիկտատուրայի զենք: Պլանավորման բազան:*

4. *Խորհրդային էկոնոմիկայի միասնությունը՝ սոցիալիստական սեկտորի ու նրա պլանի, սկզբում ղեկավարող, իսկ ապա տիրապետող դերի հիման վրա: ԽՍՀՄ էկոնոմիկայի հատկանշական յերկվությունը:*

5. Պլանի պայքարը տարերայնության դեմ՝ վորպես էկոնոմիկայի յերկվության արտահայտություն: Տարերայնության դասակարգային արմատները, տարերայնության կապիտալիստական տենդենցները: Պլանավորման մարտական դասակարգային բնույթը ԽՍՀՄ-ում:

6. Խորհրդային էկոնոմիկայի զարգացման հեղափոխական բնույթը: Պլանը վորպես զենք խորհրդային էկոնոմիկայի հեղափոխական վերակառուցման:

7. Պլանային լծակները, նրանց դերը զանազան էտապներում: Պլանավորումը նեպի վերջին էտապում (միասնական ժողտնտեսական պլան, գյուղատնտեսության ուղղակի, անմիջական պլանավորում, հանդիպական պլան) տնտեսական հաշվարկը վորպես սոցիալիստական ձեռնարկությունները վարելու մեթոդ:

8. Խորհրդային էկոնոմիկայի հիմնական օրինաչափությունների, դասակարգերի, ԽՍՀՄ-ում պլանի և տարերայնության փոխհարաբերության, պլանի բնույթի (պլան-պրոգնոզ) վերաբերյալ բուրժուական-ռեստավրատորական գրությունների քննադատությունը: Վնասարարական տնտեսա-քաղաքական յեզրակացություններ այդ տեսություններից:

9. Ընկեր Բուխարինի աջ-օպորտունիստական տեսության՝ «աշխատանքային ծախսումների օրենքի» քննադատությունը: Հակալենինյան տնտեսա-քաղաքական յեզրակացություններ այս տեսությունից («սեկտորների հավասարակշռությունը», ինքնահոսը, «ներաճումն սոցիալիզմի մեջ», նեպ անդերի հավասարեցում, դասակարգային պայքարի մարումը և այլն): Այս յեզրակացությունների ազգակցությունը բուրժուական ռեստավրատորների յեզրակացությունների հետ:

10. «Ցերկու ռեգուլյատորների»—«նախնական սոցիալիստական կուտակման օրենքի» և «ԽՍՀՄ մեջ արժեքի օրենքի» վերաբերյալ ընկեր Պրեոբրաժենսկու



տրոցկիստական տեսության քննադատությունը: Հակահեղափոխական տրոցկիզմի տնտեսա-քաղաքական յեզրակացություններն այդ կոնցեպցիայից:

## 6-ՐԴ ԹԵՄԱ

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՈՒՄ ՅԵՎ «ՀԱՍՆԵԼ ՈՒ ԱՆՑՆԵԼ» ՊՐՈԲԼԵՄԸ

1. Մոտակա 10 տարվա ընթացքում տեխնիկական-տնտեսական իմաստով առաջավոր կապիտալիստական յերկրներին «հասնել և անցնել» պրոբլեմի նշանակությունը: «Ով ո՞ւմ» պրոբլեմը համաշխարհային մասշտաբով: «Հասնել ու անցնել» պրոբլեմի ռեալությունը:

2. ԽՍՀՄ ինդուստրացման էությունը և նրա տարբերությունը կապիտալիստական ինդուստրացումից:

3. Խորհրդային էկոնոմիկայի առավելությունները և ինդուստրացման տեմպերը: Ինդուստրացման աղբյուրները: Մեր ռեսուրսները:

4. ԽՍՀՄ տեխնիկայի քաղաքականության ուղիները: Ելեկտրիֆիկացիա: Գոելրո-ի պլանը: Մետաղագործություն, քիմիա: Արդյունաբերության նոր ճյուղեր: Մեքենաշինություն և աշխատատար ճյուղերի մեքենացում:

5. Տրանսպորտը և նրա դերը սոցիալիստական ինդուստրացման մեջ:

6. Արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխումը: Կոմբինատներ: Ուրալ-Կուզնեցկի կոմբինատ: Դնեպրյան կոմբինատ:

7. Կապիտալ շինարարություն:

8. Սոցիալիստական ռացիոնալացում: Ներքին ռեսուրսների մոբիլիզացիա: Պայքար կորուստների դեմ: Վորակական ցուցանիշներ: Տնտեսական հաշվարկ:

9. Ինդուստրացման բնագավառում վնասարարական տեսություն և պրակտիկայի վերլուծությունը:

10. Ինդուստրացման հարցերում աջ օպորտունիստական դրույթների քննադատությունը։

11. Տրոցկիստական դրույթների քննադատությունը։

12. Տեմպերի խնդրում տրոցկիստական և աջ-օպորտունիստական դրույթների սերտաճումը վնասարարական դրույթների հետ։

## 7-ՐԴ ԹԵՄԱ

## ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ

1. Քաղաքի հարաբերությունը գյուղի հանդեպ կապիտալիզմի պայմաններում ԽՍՀՄ-ում։ Գյուղացիությունը կապիտալիզմի պայմաններում և ԽՍՀՄ-ում։

2. Լենինի կոոպերատիվ պլանը և նրա էտապները։ Համատարած կոլեկտիվացում։ Կոլտնտեսականը որպես գլխավոր հենարան գյուղում, որպես հողագործության կենտրոնական դեմք։ Դասակարգային պայքարը գյուղում։ Կուլակության սահմանափակումը, ճնշումը դուրսմղումն և վերացումը ինչպես դասակարգ։

3. Կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների սոցիալական բնույթը։ Նրանց դերը գյուղատնտեսության վերակառուցման մեջ և փոխհարաբերությունն իրար հետ։ Դասակարգային պայքարի էլեմենտները կոլտնտեսություններում։

4. Աշխատանքի կազմակերպման և բաշխման հիմնական սկզբունքները կոլտնտեսություններում։

5. Գյուղատնտեսության ինդուստրացման պրոբլեմը։ Տրակտորիզացիա։ Էլեկտրիֆիկացիա։ Քիմիացում։ Ագրո-ինդուստրիալ կոմբինատներ։

6. Գյուղատնտեսության շրջանայնացումը։

7. Հացահատիկային, կենդանաբուծական և հումքային պրոբլեմները։



8. Վնասարարական տեսությունն ու պրակտիկան գյուղատնտեսության գծով։

9. Գյուղատնտեսության զարգացման ուղիների և գյուղատնտեսական քաղաքականության հարցերի վերաբերյալ աջ-օպորտունիստական դրույթների քննադատությունը։

10. Տրոցկիստական դրույթների քննադատությունը։ Հակամիջակային տրոցկիստական դրույթների ռեցիդիվները։

## 8-ՐԴ ԹԵՄԱ

## ԱՇԽԱՏԱՆՔ ՅԵՎ ԿԱԴՐԵՐ

1. Աշխատանքի բնույթը հետևողական—սոցիալիստական ձեռնարկություններում և կոլտնտեսություններում։

2. Սոցմրցում։

3. Աշխատավարձի բնույթը ԽՍՀՄ-ում։ Բանվորական օրը։ Աշխատանքի պաշտպանությունը։ Սոցիալական ապահովագրությունը։

4. Սոցիալիստական կենցաղի պրոբլեմը և նոր քաղաքների շինարարությունը։

5. Աշխատանքի կազմակերպումը սոցիալիստական ձեռնարկությունների մեջ։ Պայքարը դիմազրկության դեմ։

6. Աշխատանքի արտադրողականությունը ԽՍՀ Միության մեջ և նրա գործոնները։

7. Գործազրկության վերացումը և կադրերի պրոբլեմը։ Աշխատանքային ռեսուրսները և որակյալ բանվորների պատրաստումը։ Աշխատանքի բաշխման նոր խնդիրներն ու մեթոդները։

8. Կուլտուրական հեղափոխության պրոբլեմը։

9. Վնասարարությունն աշխատանքի հարցերում։

10. Աշխատանքի հարցերում տրեդ-յունիոնիստական, աջ-օպորտունիստական և տրոցկիստական նպատակադրումների քննադատությունը։

## 9-ՐԴ ԹԵՄԱ

## ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ ՅԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ՀԱՂԹԱՀԱՐՈՒՄԸ

1. *ԽՍՀՄ-ում սոցիալիստական հանրայնացումը ինդուստրացման հիման վրա: Տնտեսաձևերի փոխկապակցությունը տարբեր էտապներում:*

2. *ԽՍՀՄ սոցիալիստական ելեմենտների ընդլայնած վերարտադրությունը. կուտակում և սպառում: Վերարտադրության տարբեր բնույթը զանազան սեկտորների մեջ տարբեր էտապներում:*

3. *Ժողեկամուտը ԽՍՀՄ-ում և նրա դինամիկան: Խորհրդային սիստեմը և ժողեկամուտի բաշխումը: Ժողեկամուտը նեպի վերջին էտապում:*

4. *Տնտեսության զարգացման ճգնաժամազերծությունը ԽՍՀՄ-ում:*

5. *Տնտեսական դժվարությունների բնույթն ու նրանց հաղթահարման ուղիները:*

6. *Վերարտադրության, մեր դժվարությունների բնույթի և ժողեկամուտի հարցերի վերաբերյալ վնասարարական, տրոցկիստական, աջ-օպորտունիստական դրույթների քննադատությունը:*

## 10-ՐԴ ԹԵՄԱ

## ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

1. *Շուկայի նշանակությունը ԽՍՀՄ սոցիալիստական շինարարության պայմաններում:*

2. *Խորհրդային առևտուրը և նրա տարբերությունը կապիտալիստականից:*

3. *Խորհրդային առևտուրը նեպի զանազան էտապներում:*

4. *Խորհրդային առևտուրը, նրա տարբերությունն անմիջական բաշխումից և անմիջական մթերափոխանակությունից:*



5. *Անմիջական բաշխման և անմիջական արտադրանքային մթերափոխանակության անցնելու ուղիները:*

6. *Խորհրդային առևտուրը և տնտեսական հաշվարկը:*

7. *Քաղաքի և գյուղի միջև կատարվող փոխանակության բնույթը նեպի վերջին էտապում: Պլանային մթերումներ ու կոնտրակտացիաներ:*

8. *Մատակարարման սիստեմը նեպի վերջին էտապում:*

9. *Գինը նեպի վերջին էտապում:*

10. *Փոխանակության և բաշխման ապարատի վերակառուցումը և սպառկոոպերացիայի խնդիրները: Պայքար դիմազրկության, նեպմանական վոգու և բյուրոկրատիզմի դեմ:*

11. *Վնասարարությունը փոխանակության բնագավառում:*

12. *Պայքար յերկու ճակատի վրա՝ փոխանակության տեսության մեջ և պրակտիկայում:*

## 11-ՐԴ ԹԵՄԱ

## ՓՈՂԸ, ՎԱՐԿԸ, ՖԻՆՊԼԱՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ

1. *Դրամական սիստեմը ԽՍՀՄ-ում: Խորհրդային դրամի տարբերությունը կապիտալիստականից:*

2. *Դրամական շրջանառությունը նեպի վերջին էտապում:*

3. *Վարկի բնույթը ԽՍՀՄ-ում, նրա տարբերությունը կապիտալիստական վարկից:*

4. *Վարկը նեպի վերջին էտապում: Վարկային ռեֆորմը: Վարկավորման ավտոմատիզմի հաղթահարումը: Ռուբլով ստուգումը:*

5. *Ֆինանսա-վարկային սիստեմն ամբողջական առմամբ և տնտեսական հաշվարկը:*

6. *Ֆինպլանի նշանակությունն ու դերն ամբողջ ժողտնտեսության պլանում:*

7. Պայքարը յերկու ֆրոնտի վրա դրամական շրջանառության, վարկի և ֆինանսների բնագավառներում:

## 12-ՐԴ ԹԵՄԱ

## ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՅԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1. Պլանային տնտեսության անհնարինությունը կապիտալիզմի պայմաններում: Պլանավորման հիմնական նախադրյալները՝ պրոլետարիատի դիկտատուրա, արտադրության հիմնական միջոցների ազգայնացում, արտաքին առևտրի մոնոպոլիա և այլն: Սոցշինարարությունը՝ վորպես պլանային շինարարություն:

2. Գոէլրո-ի պլանը՝ վորպես սոցշինարարության առաջին պլան: Նրա հիմնական նպատակադրումները:

3. Նեպին անցնելն ու Գեոսպլանի հիմնադրությունը: Գեոսպլանի խնդիրները Նեպի սկզբնական շրջանում:

4. Սոցիալիստական արդյունաբերության ամրացումը, կոոպերացման զարգացումը, սոցիալիստական հանրայնացման զարգացումը և պլանային սկզբունքի ամրապնդման պրոցեսը:

5. Առաջին կոնտրոլ թվերը և նրանց նշանակությունը: Կոնտրոլ թվերի զարգացման պրոցեսը՝ վորպես ժողտնտեսական պլան: Առաջին հնգամյակը:

6. Վնասարարների և ոպորտունիստների պայքարը հնգամյակի բոլշևիկյան դրույթների դեմ: Յերկամյակ՝ հնգամյակի հանդեպ:

7. Պլանի եյությունը վորպես հասարակական հարաբերությունները վերակառուցելու, սոցիալիստական հասարակություն կառուցելու դիրեկտիվների սիստեմ: Ստալինը պլանի մասին (16-րդ համագումար և «Պրավդա»-յում հրատարակված ճառը 1931 թ. հուլիս ամսին):

8. Հաշվառման և հսկողության դերը պլանի կատարման ընթացքում:

9. Վնասարարների և ոպորտունիստների կողմից



պլանի վերածումը պրոգնոզի (նախատեսման), պլանի մեջ թելեոլոգիայի հանդեպ գենետիկային պրիմատ (առաջնություն) տալու տեսության վնասարարական եյությունը—մի տեսություն, վոր փորձում է պլանին՝ տարերայնության զարգացումը նախատեսելու նշանակություն տալ և ԽՍՀՄ տնտեսական զարգացումն ուղղել կապիտալիզմը վերականգնելու ճանապարհով:

10. Հնգամյակի գերակատարումն և կուսակցության լոզունգը հնգամյակը չորս տարում կատարելու մասին: Վնասարարության մերկացումը պլանավորման մեջ: Հանդիպական պլան, սոցմրցում, պլանային-ոպերատիվ բրիգադները գործարաններում վորպես բանվոր դասակարգի հեղափոխական ակտիվության մոբիլիզացիայի միջոց, դժվարությունները հաղթահարելու և պլանները կատարելու միջոց:

11. 1931 թվի ժողտնտեսության պլանը և պայքարը նրա կատարման համար: 1932 թ. ստուգիչ թվերը:

12. Յերկրորդ հնգամյակի հիմնական խնդիրները:

---

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### խորհրդային տնտեսության տեսության ծրագրի վերաբերյալ կուսպրոցների համար

### 1-ԻՆ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ


1. Маркс, Критика Готской программы.
2. Маркс—Энгельс, Коммунистический манифест.
3. Ленин, Государство и революция, гл. V. т. XXI*)
4. Сталин, Об основах ленинизма, Диктатура пролетариата («Вопросы ленинизма»).
5. Программа Коминтерна, разр. III, IV.


### 2-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ


1. Ленин, Экономика и политика в эпоху диктатуры пролетариата, т. XVI, изд. 1-е.


*) Здесь и далее работы Ленина указаны по 2 и 3 изд., кроме особо оговоренных.

2. Ленин, О продналоге, т. XXVI.
3. Ленин, О кооперации, т. XXVII.
4. Сталин, Заключительное слово на VII пленуме ИККИ.
5. Сталин, Ленин и вопрос о союзе с середняком («Вопросы ленинизма», стр. 398 и далее), изд. 2-е, 1930 г.
6. Сталин, К вопросам ленинизма. Вопрос о победе социализма в одной стране (там же, стр. 270 и далее).
7. Сталин, Заключительное слово на XVI съезде.
8. Сталин, Политотчет ЦК на XVI съезде в части критики правого оппортунизма и троцкизма (разд. III).
9. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «О нэпе».

## 3-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Резолюции X, XIV, XV, и XVI съездов по вопросам хозяйственного строительства.
2. Ленин, Речь на II Всероссийском съезде политпросветов, т. XXVII.
3. Ленин, Речь и заключительное слово на Московской губернской партконференции в ноябре 1921 г., т. XXVII.
4. Ленин, О значении золота, т. XXVII.
5. Ленин, Речь на съезде союза металлистов, т. XXVII.
6. Сталин, На хлебном фронте.
7. Сталин, Об индустриализации страны и правом уклоне
8. Сталин, О правом уклоне.
9. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «О нэпе» и «О военном коммунизме».

## 4-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Сталин, Год великого перелома.
2. Сталин, Речь на конференции аграрников-марксистов.
3. Сталин, Политотчет ЦК на XVI съезде и заключительное слово, разд. II.
4. Сталин, Речь на конференции хозяйственников.
5. Молотов, Доклад на VI съезде советов (разд. «Итоги 10 лет»).
6. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «О нэпе».



## 5-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Сталин, Речь на конференции аграрников-марксистов.
2. Сталин, Политотчет ЦК XVI съезду ВКП(б).

## 6-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Ленин, Речь на VIII съезде советов, т. XXVI.
2. Ленин, О продналоге, т. XXVI.
3. Ленин, О едином хозяйственном плане, т. XXVI.
4. Сталин, Вопросы ленинизма, стр. 437—519.
5. Сталин, Политотчет ЦК XVI съезду ВКП(б).
6. Куйбышев, Доклад на XVI съезде.
7. М. Рубинштейн, статья о технике в «Большевике» № 5 за 1931 г.
8. Постановление ЦК ВКП(б) и СНК о железнодорожном транспорте.
9. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «Индустриализация».
10. Гвахария, статья в «Большевике», № 11 за 1931 г.
11. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «Электрификация».
12. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «Транспорт».

## 7-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Ленин, О кооперации, т. XVI, стр. 158—381, 1-е изд., т. XVII.
2. Сталин, Вопросы ленинизма, стр. 386, 487, 493, 522, 537, 635, 675.
3. Доклад т. Яковлева XVI съезду ВКП(б) и резолюция по докладу.
4. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «Сельское хозяйство».

## 8-ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Ленин, О роли и задачах профсоюзов, т. XXVII.
2. Сталин, Политотчет на XVI партсъезде.
3. Шверник, Доклад на XVI партсъезде.

4. Н. Цихон, Доклад на III сессии ЦИК.
5. Решения V пленума ВЦПС.
6. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «Труд».

## 9–ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Сталин, Речь на конференции аграрников.
2. Сталин, Новая обстановка—новые задачи. «Правда».
3. Сталин, Политотчет ЦК XVI съезду, п. 7-й «Данные о народном доходе».
4. Бухарин, Заметки экономиста (выдержки).

## 10–ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Постановление ЦК и СНК о потребкооперации.
2. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «О торговле»,
3. Гатовский, Советская торговля, «Большевик» № 11 за 1931 г.
4. Зеленский, Доклад на VI съезде советов.

## 11–ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Декрет о кредите от 20 марта 1931 г.
2. Козлов, статья в «Большевике» № 8 за 1931 г.
3. Калманович, статья в «Большевике» № 7 за 1931 г.
4. «В помощь партучебе», серия экономполитики, вып. «Финансы».
5. Ленин, О едином хозяйственном плане, т. XXVI.

## 12–ՐԴ ԹԵՄԱՅԻ ՀԱՄԱՐ

1. Сталин, О правом уклоне (пункт «Пятилетка или двухлетка»).
2. Письмо Сталина—Ленину о ГОЭЛРО.
3. О плане в политотчете ЦК XVI съезду ВКП(б).
4. Сталин, Речь на конференции хозяйственников «Новая обстановка—новые задачи».
5. Вайсберг, статьи в «Большевике» за 1930 г.
6. Молотов, Доклад VI съезду советов.
7. «Основные установки на 1932 г. и по второй «пятилетке».



ՀՀ Ազգային գրադարան
NL0203885

Գինը 10 կոպ. (½ մ.)

ТЕОРИЯ СОВЕТСКОГО ХОЗЯЙСТВА

Госиздат ССР Армении
Эривань—1931